Կարելի է իրաւ կործանուած համարել այն ազգը, որի քաղաքականութիւնը դադարում է վսեմանալուց. Այն ազգը, որ դադարած է յարգանք ունենալ դէպի ազնուութիւնը, ճշմարտութիւնը, արդարադատութիւնը, անկաշառութիւնը, կեանքի իրաւունք չունի. Եթէ մի որեւիցէ երկրում հարստութիւնը այն աստիճանին կխանգարէ, ղուարճութիւնը այն աստիճանին կապականէ եւ կուսակցութեան ոգին այն աստիճանին կլցնէ անափառութեամբ ժողովրդին, որ պատիւը, կարգը, հնազանդութիւնը, առաքինութիւնները եւ մտերմութիւնը ակնյայտնի միայն անցած ժամանակում պիտի երեւին, ազնիւ մարդիկների բոլոր յոյսը—եթէ ընդհանուր խաւարի մէջ բարեբաղդաբար դեռ ես կգտնվին— այն պիտի լինի, որ միասին ժողովուած եւ ձեռք ձեռին տուած աշխատեն անձնական բնաւորութեան վերանորոգութեան եւ բարձրացնելուն վերայ, որովհետեւ միմիայն սորանով կարող է ազգը փրկվել. Իսկ եթէ բնաւորութիւնը իրաւ անդառնալի փըչացած է արդէն, այն ժամանակ փրկվելու արժանի ոչինչ չէ մնացել.

Ճէմ. Ն. Թարգ. ատ. Թ. Պ.

Համառօտ հաշուեցուցակ մտից և ծախուց գանձարանաց Աստրախանու Հայոց Եկեղեցա-Հոգեւոր դպրոցաց, ըստ 1879 ամի.

| ՄՈՒՏՔ. | Ր. | Կ. |
|---|---|---|
| Ի 1878 ամէ մնացեալ էին դրամատոմսակք պետական եւ քաղաքական բանկի, ընդամենն . | 7525 | |
| Մուտք 1879 ամի. | | |
| Յարդեանց Ս. Աստուածամօր եւ Պետրոսի եւ Պօղոսի եկեղեցեաց Աստրախանայ . . | 2162 | .. |
| Ի տոկոսեաց դրամատոմսակաց | 1867 | 24 |
| Յարդեանց Բարձրագոյն Հաստատեալ եկեղեցական Հոգաբարձութեան Հայազգի տնանկաց Աստրախան քաղաքի . . | 300 | .. |
| Յընծայաբերութենէ բարերար Անդամոց . . . . | 243 | .. |
| Ի Գանձանակադրամոց, ժողովելոց յեկեղեցիս յաւուրս Հանդիսաւոր տօնից . . . | 161 | 69 |
| Ի վարձուց ուսման աշակերտաց եւ աշակերտուհեաց . . | 71 | .. |
| Ի վարձադնոց դպրոցապատկան կալուածոց. . . . | 58 | .. |
| Ի վաճառմանէ ձեռագործութեանց . . . . | 5 | .. |
| Իսկական մուտք 1879 ամի— | 4867 | 95 |
| Բաց ի վերոյգրեալ յօդուածոց իսկական եկամտից ի տումարի 1879 ամի, ի կարգս մտից դըրեալ տեսանին. առ ի հաւասարել զհաշուեկշիռ մտից. | | |

| ԾԱԽՔ. | Ր. | Կ. |
|---|---|---|
| Ռոճիկ ուսուցչաց եւ վերակացուաց . . . | 3040 | 10 |
| Ռոճիկ սպասաւորաց եւ ժամագործի . . . . | 320 | 50 |
| Ի գին տնտեսական պիտոյից . | 197 | 63 |
| Ի գին վառելափայտի . | 137 | 30 |
| Ի նորոգութիւն տանց դպրոցաց | 69 | 32 |
| Ի գին պիտոյից ուսումնառութեան . . . | 48 | 93 |
| Ի գին ապահովելոյ ի հրկիզութենէ պատուոյն Օրիորդաց դպրոցի | 46 | 33 |
| Ի գին նիւթոց ի պէտս ձեռագործութեան . . . | 11 | 58 |
| Հասուցան Հոգաբարձուի դըպրոցաց պարոն Ղազարու Լեզեան ի վճար յինքենէ փոխարինաբար ծախսեալ դրամոց յընթացս դեկտեմբերի 1878 ամի, ի պատճառս պակասութեան եկամտից այնր ամի | 399 | 55 |
| Իսկական ծախք 1879 ամի— | 4262 | 74 |
| Այլեւ ի կարգս ծախուց 1879 ամի արձանագրեալ կան ի տումարին առ ի հաւասարել զհաշուեկշիռ ծախուց, | | |
| Երկու դրամատոմսակք Աստրախանայ քաղաքական բանկի № 206 (100 ր.) եւ № 238 (1000 ր.)-վասն փոխելոյ ի նոր տոմսակ | 1100 | |
| Ռոճիկ ուսուցչի Գրիգորի Միսնիկեան, վասն մայիս ամսոյ, սխալմամբ գրեալ երկրորդ անգամ ի ծախս . . . | 12 | 50 |

| | | |
|---|---|---|
| Մի հատ 5% դրամատոմսակ Աստրախանայ քաղաքական Բանկի, տուեալ յանուն դպրոցաց ի 15էն փետրվարի 1879 ամի № 354. գումարաւ 1.100 ր. ի տեղի նոյնպիսեաց, ընդ համարօք 236. (1000 ր.) եւ № 206. (100 ր.) որոց կատարեալ էր սահմանեալ ժամանակն . . | 1100 | .. |
| Ուսճիկ ուսուցչի Գրիգորի Միսսնիկեան վասն մայիս ամսոյ. սխալմամբ կրկնակի ցուցեալ ի ծախս ընդ յօդ. 103—116 . | 12 | 50 |
| Փոխարինաբար մատուցեալք ի Հոգաբարձուէ դպրոցաց ի Յովհաննէս Վարդապետէ Շիրակունեայ, ի պատճառս պակասութեան եկամտից յընթացս մայիսի 1879 ամի. . . . | 232 | 50 |
| 1345 ր. | | |
| Ընդամենն մուտք 1879 ամի . | 6212 | 93 |
| Մնացորդք եւ մուտք . . | 13737 | 93 |

| | | |
|---|---|---|
| Հատուցան Հոգաբարձուի դպրոցաց Յովհաննէս Վարդապետի Շիրակունեայ ի վճար յինքենէ փոխարինաբար տարեալ ծախուց յընթացս մայիսի 1879 ամի. ի պատճառս պակասութեան եկամտից . . . . | 23 | 50 |
| 1345 ր. | | |
| Ընդամենն ծախք 1879 ամի | 560 | 74 |
| Մնան առ 1880 թուականն. ա. Դրամատոմսակք առ գումարաւ 7525 ր. եւ բ. Առ ձեռն պատրաստի դրամք 605—19 կ. | 8130 | 19 |
| Ծախք եւ մնացորդք | 13737 | 93 |

Կառավարիչ տեսուչ. Մելքիսեդեկ Քահ. Քալանթարեան

Խ. Գաբուչեան.

Յ. Սարգսեան.

## ՆՈՐ ԽՆՁՈՐՆԵՐ.

Նայում եմ ինչպէս մանուկներն ազատ խաղումեն բակում,
Նոցա երեսներ զուարթ են, առողջ և բաղդ են յայտնում,
Նոցա ձեռներին չէ դիպել դեռ եւս կոպիտ աշխատանք,
Նոցա պարզ աչքեր չեն մթնեցնում դեռ ցաւ և հառաչանք.
Նայում եմ՝ նոցա և վերուզզումեմ իմ մաղթանք խորին,
Որ չհանդիպին նոքա տանջանքի դառն բաժակին,
Որ ուրախ օրեր և ազնիւ գործեր լցնեն նոցա կեանք,
Մաքուր և փայլուն լինի ճանապարհ, չխեղդէ զրկանք,
Որ դժուարատար վիշտ և անարգանք նոքա չտեսնեն,
Որ նոր խնձորներ խնձորենիքից միշտ հեռու ընկնեն.

Իշխան Բագրատունի.

## ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.

Հնդկաստանի Հայերի նախկին և ներկայ վիճակի մասին քանի մի տեղեկութիւններ կքաղենք «Արշալոյս Արարատեան» լրագրից (1880, յունվարի 19), որ գրած է պ. Գ. Գասպարեան.

«Ի ծաղկել Ջուղայեցի վաճառականաց ի Հնդիկս ի 1688 ամի դաշնագրութիւն հաստատի ընդ մէջ Արեւելեան Հնդկաստանի ընկերութեան և վաճառականաց Հայոց. Սոյն դաշնագրութեամբ Հայկազունք գտանէին